Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-116[3]-25.04.2019-ՖՎ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-516-Ն օրենքի 39-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «մարտի 25-ից» բառերը փոխարինել «հուլիսի 1-ից» բառերով.

2. 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը, եթե հաշվետու տարվա վերջի դրությամբ հիմնադրամի ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 10 միլիոն դրամը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-516-Ն օրենքի 39-րդ հոդվածի՝

1~~) առաջին պարբերությունում~~. 1-ին մասում «մարտի 25-ից» բառերը փոխարինել «հուլիսի 1-ից» բառերով.

2~~)~~. 1-ին մասի 3-րդ ~~մասը~~կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը, եթե հաշվետու տարվա վերջի դրությամբ հիմնադրամի ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 10 միլիոն դրամը:»:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին», «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին», «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի (Կ-116-25.04.2019,25.09.2019-ՖՎ-011/1) վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի նախագիծ					
1	ՀՀ կառավարություն	Նախագծերի տեքստերում	«Հանրային հաշվետվողականություն ունեցող կազմակերպություններ» հասկացությունը փոխարինվել է «Հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություններ» հասկացությամբ	Ընդունվել է: Փոփոխության նպատակը նշված խմբի կազմակերպությունների կարգավիճակն ավելի ակնառու դարձնելն է:	Ընդունվել է:
2	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	3-րդ հոդված 6-րդ կետի բ ենթակետ.	Հանրային ծառայություններ մատուցող ընկերությունները, ինչպես նաև շուկայում գերիշխող դիրք ունեցողները ևս պետք է	Չի ընդունվել: Հանրային ծառայություններ մատուցող ընկերությունները	Չի ընդունվել:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			ներառվեն այս խմբում, քանի որ, օրինակ՝ ներդրումային ընկերություններից առավել դրանք են առաջին հերթին հանրային հաշվետվողականություն ունեցող ընկերությունները:	որպես հանրային հաշվետվողականություն ունեցող դիտարկելու գաղափարին դեմ չենք, սակայն կարծում ենք, որ նման ծառայություններ մատուցող մեծ ընկերու-թյունները այս օրենքի նա-խագծի շրջանակներում կբավարարեն առնվազն միջին կազմակերպության դասակարգմանը և, հետևաբար, ֆինանսական հաշվետվությունների հրա-պարակման և պարտադիր աուդիտի պահանջները կտարածվեն նաև այդ կազմակերպությունների վրա: Այնուամենայնիվ, եթե խոսքը վերաբերում է բոլոր հանրային ծառայություններ մատուցողներին (փոքր ՋՐԷԿ, ինտերնետային սպասարկմամբ զբաղվող փոքր ընկերություն և այլն),	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				ապա անհրաժեշտ կլինի լրացուցիչ քննարկումներ իրականացնել Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձաժողովի հետ՝ այդ կազմակեր-պությունների շրջանակը և ֆինանսական հաշվետվողա-կանության և աուդիտի հետ կապված գործող կար-գավորումները հասկանալու համար: Ինչ վերաբերում է շուկայում գերիշխող դիրք ունեցող կազմակերպություններին, ապա եթե շուկան իր ծավալներով փոքր չէ (օրինակ տարեկան 4 մլրդ դրամից), ապա, ըստ էության, այդ շուկայում գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունը այս օրենքի շրջանակներում կդասակարգվի առնվազն որ-պես միջին կազմակերպու-	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				թյուն և պարտավոր կլինի հրապարակել և աուդիտի ենթարկել իր ֆինանսական հաշվետվությունները: Միաժամանակ, ՀՀ ՏՄՊՊՀ 2011 թվականի մայիսի 23-ի թիվ 194-Ն որոշմամբ հաստատվել է նաև տնտեսվարող սուբյեկտի գերիշխող դիրքի որոշման կարգը, որի համաձայն գերիշխող դիրքը որոշելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել մի շարք գնահատումներ, ինչը կարող է դժվարացնել օրենքի հա-մապատասխան դրույթի կիրառումը: Միաժամանակ, դրույթի կիրառման նպատակով անհրաժեշտություն կա-ռաջանա, որպեսզի ՏՄՊՊՀ-ն յուրաքանչյուր տարի գնահատի ՀՀ-ում գործող	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				բոլոր շուկաները:	
3	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	3-րդ հոդվածի 7-րդ կետ.	Խոշոր, միջին և փոքր ընկերու-թյունների դասակարգումը կնկնում է Եվրամիության կողմից սահմանված չափանիշները, այնինչ դրա անդամ ամենաաղ-քատ երկրից ՀՀ-ն առնվազն կրկնակի աղքատ է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով: Ավելին, նույնիսկ փոքր ընկերությունների համար սահմանվել է 100 աշխատակցի պայմանական շեմ, այն դեպքում, երբ Եվրամիությունում այդ չափանիշը 50 է: Այս առումով հետաքրքիր է իմա-նալ, թե Կառավարության գնա-հատականով ՀՀ-ում տնտեսվարող սուբյեկտներից քանի՞սն են համապատասխանելու խոշորի, միջինի, փոքրի և միկրոյի չափանիշներին: Կարծում ենք, որ չափանիշները	Չի ընդունվել: Հաշվապահական հաշվառ-ման և աուդիտորական գործունեության ոլորտներում բարեփոխումների անհրաժեշտությունը պայ-մանավորված է նաև պար-տադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների շրջանակի ճշգրտման ան-հրաժեշտությամբ՝ ներկայումս գործող օրենսդրական ձևական պահանջից անցում կատարելով իրապես աուդիտի ենթարկվելու հանրային պահանջ ունեցող ընկերություններ ներգրավելուն: Ներկայումս տարբեր օրենք-ներով պարտադիր աուդիտի է ենթակա շուրջ 1,200 կազմակերպություն, որոնց	Չի ընդունվել:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			պետք է կրկնակի պակասեցնել: Առաջարկում ենք նաև գերխոշոր-ների խումբ առանձնացնել, որի համար սահմանել 500 աշխա-տակցի, ինչպես նաև ակտիվների և հասույթի համար համա-պատասխանաբար 50 և 100 միլիարդ դրամի շեմ: Այս խմբի համար պետք է կիրառվեն ամենախիստ պահանջները:	գրեթե կեսը որևէ գործունեություն չիրակա-նացնող բաց բաժնետիրական ընկերություններ են: Միաժամանակ, մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը պար-տադիր աուդիտի պահանջ սահմանված է եղել նաև «Հաշվապահական հաշվառ-ման մասին» ՀՀ օրենքի իմաստով խոշոր համարվող կազմակերպությունների համար: Սակայն, տնտեսավարող սուբյեկտների և մասնագիտական հանրության կողմից արտաքին աուդիտի որակի վերաբերյալ ներկայացված մի շարք մտահոգությունների արդյունքում 2014 թվականի մայիսին հանվեց խոշոր կազմակերպությունների աուդիտի ենթարկվելու պարտադիր պահանջը: Հետևաբար, օրենքի	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				նախագծում առկա սահմանաչափերի նվազեց-ման պարագայում կարող է ռիսկ առաջանալ, որ նորից ի հայտ կգան աուդիտորական կազմակերպություններ, որոնք ոչ բարեխիղճ վարքագիծ կդրսևորեն: Մեր գնահատմամբ կազ-մակերպությունների թվաքանակը հետևյալն է՝ Միջին կազմակերպություններ – շուրջ 230 Խոշոր կազմակերպություն-ներ – շուրջ 80 ՀՀ-ում գրանցված մնացած կազմակերպությունները սույն օրենքների նախագծերի իմաստով կդասակարգվեն որպես փոքր կամ միկրո կազմակերպություններ: Ինչ վերաբերում է գերխոշոր	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				կազմակերպությունների խումբ սահմանելուն և ամենախիստ պահանջները նրանց նկատմամբ սահ-մանելուն, ապա հայտնում ենք, որ օրենքների փաթեթով միջին կազմակերպու-թյուններից սկսած բոլոր կազմակերպությունները ենթարկվում են միևնույն խիստ կարգավորումների, օրինակ՝ ֆինանսական հաշվետվությունների հրապարակումը, աուդիտի ենթարկելը, որակավորված գլխավոր հաշվապահ ունե-նալը և այլն:	
4	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	3-րդ հոդվածի 9-րդ կետի գ ենթակետ.	Ինչու՞ է 100, եթե եվրոպայում 50 է:	Չի ընդունվել: Ցուցանիշը փոփոխվել է հան-րային քննարկումների արդյունքում ներկայացված առաջարկությունների հիման վրա:	Չի ընդունվել:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				Տես նաև 1-ին առաջարկու-թյան մեկնաբանությունը:	
5	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	7-րդ հոդվածի 4-րդ կետ.	Հավանաբար պետք է ներառի սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կազմակերպությունները: Ինչու՞ չկա, ասենք, ներդրումային ֆոնդի կառավարիչը: Այս հարցով ԿԲ-ից ասացին, որ վրիպակ է ու փոփոխված տեքստի հետ կապված կտեղեկացնեն ԱԺ-ին:	Չի ընդունվել: ԿԲ կողմից առաջարկվող նոր խմբագրություն չի ներկայացվել:	Չի ընդունվել:
6	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	10-րդ հոդվածի 1-ին մաս	Մասում «կարող են աշխատել» բառերից հետո ավելացնել «միայն» բառը՝ տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու համար:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
7	ՀՀ կառավարություն	17-րդ հոդված 6-րդ մաս	ՇՄՋ տևողության նկատմամբ պահանջը համապատասխանեցնել ԵԱՏՄ անդամ երկրների միջև կնքվող աուդիտի համաձայնագրի պահանջներին՝ այն է, 1 տարվա ընթացքում առնվազն 40 ժամ	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			տևողությամբ ՇՄՋ անցնելու պահանջը փոխարինել 2 տարվա ընթացքում առնվազն 80 ժամ տևողությամբ ՇՄՋ անցնելու պահանջով, բայց ոչ պակաս քան 20 ժամ յուրաքանչյուր օրացուցային տարվա համար:		
8	ՀՀ կառավարություն	18-րդ հոդվածի 1-ին մաս	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՎԽ հետ համաձայնեցվելու է որակավորման քննություններ անցկացնող որակավորման հանձնաժողովի կանոնա-դրությունը, որակավորման հանձնաժողովի անհատական կազմը ՀՎԽ հետ համաձայնեց-նելու անհրաժեշտություն չկա:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
9	ՀՀ կառավարություն	21-րդ հոդվածի 1-ին մասի	3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ «չի պահպանվել սույն օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները՝ կապված շա-	Ընդունվել է: Նախկին խմբագրությամբ ՇՄՋ պահանջները չկա-տարելու դեպքերը հարգելի	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
		3-րդ կետ	ռունակական մասնագիտական զարգացման հետ, բացառությամբ այնդեպքերի, որոնք հարգելի են համարվում «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված աուդիտորների և փորձագետ հաշվապահների շարունակական մասնագիտական զարգացման կարգի համաձայն»	էին ճանաչվում մասնագի-տացված կառույցի կողմից, ինչը կարող էր առաջացնել տարաբնույթ ռիսկեր: Առաջարկվող խմբագրու-թյամբ ՇՄԶ պահանջները չկատարելու դեպքերը հար-գելի կհամարվեն աու-դիտորների և փորձագետ հաշվապահների ՇՄԶ կար-գով, որը մշակվում է մաս-նագիտացված կառույցի կողմից և համաձայնեցվում ՀՎԽ հետ:	
10	ՀՀ կառավարություն	27-րդ հոդվածի 6-րդ մաս	Նախատեսել դրույթ առ այն, որ ֆինանսական հաշվետվություն-ները հրապարակումից հետո առնվազն 5 տարի պետք է պահ-պանվեն այն կայքում, որտեղ դրանք հրապարակվել են	Ընդունվել է: Նշված դրույթի նախատե-սումը պայմանավորված է այն ռիսկի առկայությամբ, որ կազմակերպությունները կարող են հրապարակել իրենց ֆինանսական հաշ-վետվությունները և անմի-ջապես կամ որոշ ժամանակ անց հանել հրապարակման	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				կայքից:	
11	ՀՀ ԱԺ պատգամավոր Վահագն Թևոսյան	27-րդ հոդվածի 6-րդ մաս	6-րդ մասում՝ 1. «պաշտոնական ինտերնետային կայքում» բառերից հետո լրացնել «կամ տպագիր մամուլում» բառերով: 2. «հրապարակել է իր ինտեր-նետային կայքում» բառերից հետո լրացնել «կամ տպագիր մամուլում,» բառերով: 3. «հղումը (հասցեն)» բառերից հետո լրացնել «կամ տպագիր մամուլի անունը, թողարկման համարը և ամսաթիվը» բառերով: Գործող «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը սահ-մանում է, որ ֆինանսական հաշ-վետվությունները կարող են հրա-պարակվել մամուլում, ինտերնե-	Ընդունվել է մասնակի: Օրենքի նախագծի 27-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվել է, որ կազմա-կերպությունները, որոնց ֆինանսական հաշվետվու-թյուններն օրենքին համա-պատասխան ենթակա են հրապարակման, ֆինան-սական հաշվետվությունների պատկերամուտները հրապարակում են իրենց ինտերնետային կայքում կամ http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաս-տանի Հանրապետության հրապարակային ծանու-ցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետության հրապարակային	Ընդունվել է մասնակի:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			տով կամ տարածվել գրքույկների ձևով: «Հաշվապահական հաշ-վառման մասին» ՀՀ օրենքի նա-խագծով տպագիր մամուլը այլևս չի հանդիսանա ֆինանսական հաշվետվությունների հրապարակ-ման միջոց: Տպագիր լրատվա-միջոցների բացառումը, որպես ֆինանսական հաշվետվու-թյունների հրապարակման տար-բերակ, զրկում է մամուլին տնտեսական մրցակցության հնարավորությունից, ինչպես նաև եկամուտի հավելյալ աղբյուրից, ինչը վտանգում է լրատվամի-ջոցների ֆինանսական անկա-խությանը: Կարևոր է արձանա-գրել, որ պետական կայք հանդի-սացող http://www.azdarar.am -ը ծանուցումներն անվճար չի տե-ղադրում, ավելին՝ շուկայական գներից ավելի թանկ է մատուցում ծառայությունը: Սա կարող է դի-տարկվել որպես մենաշնորհային դիրքի չարաշահում: Հաշվի առնե-	ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքին նշված ձևակերպմամբ որևէ մենաշնորհ չի տրամադրվել, քանի որ կազմա-կերպությունները վերը նշված կայքից բացի, հնա-րավորություն ունեն ֆինանսական հաշվետվու-թյունները հրապարակել նաև իրենց ինտերնետային կայքերում: Միաժամանակ, կարծում ենք, որ տպագիր մամուլում ֆինանսական հաշվետվու-թյունները հրապարակելը գործնականում իրատեսական չէ, քանի որ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստան-դարտներին համապատաս-խան պատրաստված ֆինանսական հաշվետվութ-յունների ամբողջական	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			լով այն հանգամանքը, որ թերևս կարևորվում է բոլոր հայ-տարարությունների մեկտեղումը մեկ վայրում, այնուամենայնիվ նկատելի է նաև, որ գործադիրը համաձայն է http://www.azdarar.am -ում տեղադրել միայն հղումներ, եթե հաշվետվությունները տպա-գրված են հաշվետու սուբյեկտի կայքում: Ըստ այդմ առաջարկում եմ նույն սկզբունքով հնարավորություն տալ http://www.azdarar.am -ում հրապա-րակել միայն տպագիր լրատ-վամիջոցի անունը, թողարկման համարն ու ամսաթիվը, եթե հաշ-վետվությունը տպագրվել է տպա-գիր մամուլում: Անհրաժեշտության դեպքում, այդ տեղեկությունն օգտագործելով, անհրաժեշտ հաշվետվությունը հնարավոր կլինի գտնել Ազգային արխիվում:	փաթեթը սովորաբար կազ-մում է միջինում շուրջ 60 էջ: Նշվածը հաշվի առնելով, առաջարկի հիման վրա Օրենքի նախագծի 27-րդ հոդվածի 6-րդ մասը խմբագրվել է հետևյալ կերպ. «6. Կազմակերպությունները, որոնց ֆինանսական հաշվետվություններն օրենքին համապատասխան ենթակա են հրապարակման, ֆինանսական հաշ-վետվությունների պատկերա-մուտները հրապարակում են իրենց ինտերնետային կայքում, http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաս-տանի Հանրապետության հրապարակային ծանուցում-ների պաշտոնական ինտերնետային կայքում կամ Հայաստանի Հանրա-	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				պետությունում գրանցված զանգվածային լրատվության միջոցի պաշտոնական ինտերնետային կայքում: Ընդ որում, եթե կազ-մակերպությունը ֆինան-սական հաշվետվությունները հրապարակել է իր ինտերնետային կայքում կամ Հայաստանի Հանրա-պետությունում գրանցված զանգվածային լրատվության միջոցի պաշտոնական ինտերնետային կայքում, ապա ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ինտերնե-տային կայքի հղումը (հասցեն) պարտավոր է հրապարակել նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաս-տանի Հանրապետության հրապարակային ծանու-ցումների պաշտոնական	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				ինտերնետային կայքում:»	
12	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	27-րդ հոդվածի 7-րդ մաս.	Պետք է սահմանել 3 աշխատան-քային օր: 10 օրը շատ երկար ժամ-կետ է կայքին հղումը տրա-մադրելու կամ ֆայլն էլեկտրոնային կրիչով փոխանցելու համար:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
13	ՀՀ կառավարություն	29-րդ հոդված	Անցումային դրույթներում տարբեր կարգավորումներին առնչվող անցումային ժամկետները հետաձգել 1 տարով	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է, քանի որ անցումային դրույթներում ներկայումս նախատեսված ժամկետները սահմանվել էին նախորդ տարվա սեպտեմբերին, երբ ՀՀ կառավարությունը հավանության արժանացրեց օրենքների նախագծերի փաթեթը և ներկայացրեց ՀՀ ԱԺ քննարկման: Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել 1 տարով հետաձգել ժամկետները:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
14	ՀՀ կառավարություն	29-րդ հոդված	Անցումային դրույթներում նա-խատեսել նոր մաս ներկայումս ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված մասնագիտացված կառույցի կողմից տրամադրված հաշվապահների որակավորման վկայագրեր ունեցող անձանց համար առ այն, որ այդ վկայա-գրերը մինչև 2021 թվականի հունվարի 1-ը դիմելու դեպքում կփոխարինվեն փորձագետ հաշվապահի որակավորման վկայականով:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
15	ՀՀ կառավարություն	29-րդ հոդված	Անցումային դրույթներում նախա-տեսել նոր մաս, որով ՀՀ ֆինանս-ների նախարարությանը հնա-րավորություն կընձեռվի ընթացք տալ հաշվապահի որակավորում ստանալու համար ներկայացված այն բոլոր դիմումներին, որոնք կստացվեն մինչև օրենքի նախագծով նախատեսված առաջին մասնագիտացված	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			կառույցի հավատարմագրումը:		
16	ՀՀ կառավարություն	3-րդ հոդվածի 1-ին մաս, 7-րդ հոդվածի 4-րդ մաս, 17-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ մասեր, 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր, 19-րդ հոդվածի 2-րդ մաս, 21-րդ հոդվածի 1-ին մաս,	Կատարել տեխնիկական և խմբագրական բնույթի շտկումներ:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
		29-րդ հոդվածի 1-ին մաս			
17	ՀՀ Ազգային Ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով	10-րդ հոդվածի 3-րդ կետ	Նախատեսել, որ ֆինանսական կազմակերպությունների գլխավոր հաշվապահ աշխատելու համար, ի լրումն փորձագետ հաշվապահ կամ աուդիտոր լինելու պահանջի, ՀՀ կենտրոնական բանկը կարող է սահմանել նաև լրացուցիչ պահանջներ, ինչպես նաև անցումային դրույթ սահմանել այն անձանց համար, ովքեր օրենքն ուժի մեջ մտնելու պահին կունենան ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված հաշվապահի որակավորում	Ընդունել է : Համապատասխանաբար փոփոխվել են Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 29-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, ինչպես նաև 29-րդ հոդվածում նախատեսվել է նոր 8-րդ մաս	Ընդունել է :
18	ՀՀ կառավարություն	3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, 4-րդ հոդվածի 2-րդ մասում, 7-րդ հոդվածի 4-րդ մասում, 27-րդ	Կատարել խմբագրական բնույթի շտկումներ 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, 4-րդ հոդվածի 2-րդ մասում, 7-րդ հոդվածի 4-րդ մասում, 27-րդ հոդվածի 3-րդ մասում	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	**3**	**4**	**5**	**6**
		հոդվածի 3-րդ մասում			
«Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծ					
1	ՀՀ կառավարություն	22-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետ	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աուդիտորական կազմակեր-պությունները պարտավոր են ԱՄՍ-ներին համապատասխան իրականացնել աուդիտի փաս-տաթղթավորում, ինչպես նաև ՀՎԽ կողմից ապահովվելու է աուդիտորական կազմակերպու-թյունների նկատմամբ որակի հսկողության արտաքին գնահատ-ման իրականացման ընթացա-կարգերի մշակումը և հաստա-տումը, որով մանրամասն ներկայացվելու են աուդիտորական կազմակերպությունների կողմից անցկացվող աուդիտի որակի ստուգման նկատմամբ բոլոր պահանջները, առաջարկվում է հանել աուդիտորական կազմակերպությունների պարտա-	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			վորությունը՝ վարելու իր կողմից կնքված պայմանագրերի գրանցամատյանը:		
2	ՀՀ կառավարություն	25-րդ հոդվածի 6-րդ մաս	ՇՄՋ տևողության նկատմամբ պահանջը համապատասխանեցնել ԵԱՏՄ անդամ երկրների միջև կնքվող աուդիտի համաձայնագրի պահանջներին՝ այն է, 1 տարվա ընթացքում առնվազն 40 ժամ տևողությամբ ՇՄՋ անցնելու պահանջը փոխարինել 2 տարվա ընթացքում առնվազն 80 ժամ տևողությամբ ՇՄՋ անցնելու պահանջով, բայց ոչ պակաս քան 20 ժամ յուրաքանչյուր օրացուցային տարվա համար	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
3	ՀՀ կառավարություն	26-րդ հոդվածի 1-ին մաս	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՎԽ հետ համաձայնեցվելու է որակավորման քննություններ անցկացնող որակավորման հանձնաժողովի կանոնադրությունը, որակավոր-ման հանձնաժողովի անհատական	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			կազմը ՀՎԽ հետ համաձայ-նեցնելու անհրաժեշտություն չկա:		
4	ՀՀ կառավարություն	29-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ	5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «չեն պահպանվել սույն օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները՝ կապված շարունակական մասնագիտական զարգացման հետ, բացառությամբ այն դեպքերի, որոնք հարգելի են համարվում «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված աուդիտորների և փորձագետ հաշվապահների շարունակական մասնագիտական զարգացման կարգի համաձայն»	Ընդունվել է: Նախկին խմբագրությամբ ՇՄԶ պահանջները չկատա-րելու դեպքերը հարգելի էին ճանաչվում մասնագիտացված կառույցի կողմից, ինչը կարող էր առաջացնել տարաբնույթ ռիսկեր: Առաջարկվող խմբագրությամբ ՇՄԶ պահանջները չկատարելու դեպքերը հարգելի կհամարվեն աուդիտորների և փորձագետ հաշվապահների ՇՄԶ կարգով, որը մշակվում է մասնագիտացված կառույցի կողմից և համաձայնեցվում ՀՎԽ հետ:	Ընդունվել է:
5	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	30-րդ հոդված	Ավելացնել 6-րդ մաս. «սույն օրենքի հոդված 21-ի 6-րդ մասը կիրառվում է օրենքն ընդու-	Չի ընդունվել: Առաջարկը չի ընդունվել, քանի որ աուդիտորական	Չի ընդունվել:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			նելուց հետո մատուցած աուդիտո-րական ծառայությունների նկատմամբ:»: Քանի որ մինչև սույն օրենքի ընդունումը աուդիտորական կազմակերպությունների կողմից մատուցված աուդիտորական ծառայությունների համապատաս-խանությունը գործող օրենքին իրականացվում էր ՀՀ Ֆինանս-ների նախարարության համա-պատասխան ստորաբաժանման կողմից:	կազմակերպությունները կարող են կնքել նաև շա-րունակական աուդիտի պայ-մանագրեր, որոնք կարող են ընդգրկել մի քանի հաշվետու ժամանակաշրջանների աուդիտ: Ինչ վերաբերում է ներկայումս աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից որակի հսկողության իրա-կանացմանը, հայտնում ենք, որ նման հսկողություն շուրջ 1 տարի է չի իրականացվում, քանի որ տեսչական բարեփո-խումների շրջանակներում համապատասխան տեսչու-թյունը լուծարվել է:	
6	ՀՀ կառավարություն	30-րդ հոդված	Անցումային դրույթներում տարբեր կարգավորումներին առնչվող անցումային ժամկետները հետաձգել 1 տարով	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է, քանի որ անցումային դրույթներում ներկայումս նախատեսված ժամկետները	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				սահմանվել էին նախորդ տարվա սեպտեմբերին, երբ ՀՀ կառավարությունը հավանության արժանացրեց օրենքների նախագծերի փաթեթը և ներկայացրեց ՀՀ ԱԺ քննարկման: Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել 1 տարով հետաձգել ժամկետները:	
7	ՀՀ կառավարություն	30-րդ հոդված	Անցումային դրույթներում նա-խատեսել նոր մաս ներկայումս ՀՀ ֆինանսների նա-խարարության կողմից հավատար-մագրված մասնագիտացված կա-ռույցի կողմից տրամադրված աուդիտորների որակավորման վկայագրեր ունեցող անձանց հա-մար առ այն, որ այդ վկայագրերը մինչև 2021 թվականի հունվարի 1-ը դիմելու դեպքում կփոխարինվեն այս օրենքի իմաստով աուդիտորի որակավորման վկայականով	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
8	ՀՀ Ազգային Ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով	Նախագծի 30-րդ հոդվածի 1-ին մաս	Անցումային դրույթներում սահմանել նորմ, որով 2019թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված աուդիտորի գործող որակավորում ունեցող անձանց հնարավորություն կընձեռվի մինչև 2023թ. հունվարի 1-ը պարզեցված կարգով անդամակցել մասնագիտացված կառույցին	Ընդունվել է:	Ընդունվել է:
9	ՀՀ կառավարություն	3-րդ հոդվածի 1-ին մաս, 9-րդ հոդվածի 3-րդ մաս, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր, 21-րդ հոդվածի	Կատարվել են տեխնիկական և խմբագրական բնույթի շտկումներ	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
		5-րդ մաս, 25-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ մասեր, 26-րդ հոդվածի 1-ին մաս, 27-րդ հոդվածի 2-րդ մաս, 29-րդ հոդվածի 1-ին մաս, 30-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասեր			
«Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ***ՀՀ օրենքի նախագիծ***					

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
1	ՀՀ կառավարություն	2-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի «ա» ենթակետ	Սահմանումներում որպես գործող աուդիտոր համարել վերջին 3 տարում ինչպես պարտադիր, այնպես էլ կամավոր աուդիտ իրականացրած անձին, այլ ոչ թե միայն պարտադիր աուդիտ իրականացրածին	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
2	ՀՀ կառավարություն	6-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ	ՀՎԽ լիազորություններում նախա-տեսել, որ ՀՎԽ-ն ոչ միայն հաստատում է որակի հսկողության արտաքին գնահատման ընթացակարգերը, այլև ապահովում է դրանց մշակումը	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
3	ՀՀ կառավարություն	6-րդ հոդվածի 3-րդ մասում	Կատարել խմբագրական բնույթի շտկում	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
4	ՀՀ կառավարություն	7-րդ հոդվածի 1-ին մաս	ՀՎԽ առաջին կազմի համար նախատեսել տարաժամկետ պաշ-տոնավարում՝ խուսափելու ՀՎԽ ամբողջ կազմի միաժամանակյա փոփոխությունից, իսկ	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			հետագայում ՀՎԽ անդամները կնշանակվեն 5 տարի ժամկետով:		
5	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	16-րդ հոդվածի 3-րդ մաս	3-րդ մասում ավելացնել նոր 4-րդ կետ. «Մասնագիտացված կառույցի խորհրդի նախագահը, գործադիր տնօրենը և որակի վերահսկողու-թյան ապահովման արտաքին գնահատում իրականացնող ան-ձինք չեն կարող լինել սույն նա-խագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի բ, գ, ե ենթակետերի պահանջները բավարարող գործող աուդիտորները:»: Մասնագիտացված կառույցի անկախությունը, օբյեկտիվությունը և անաչառությունը ապահովելու նպատակով:	Չի ընդունվել: Անկախության վտանգին առնչվող հարցերը, կարծում ենք, պետք է առավելապես դիտարկվի Հանրային վերահսկողության խորհրդի դեպքում: Այնուամենայնիվ կարծում ենք, որ առաջարկվող սահ-մանափակումը կարելի է նախատեսել գլխավորապես արտաքին գնահատում իրականացնող անձանց համար՝ ՀՎԽ կողմից հաստատվելիք արտաքին գնահատման ընթացակարգերով:	Չի ընդունվել:
6	ՀՀ կառավարություն	22-րդ հոդվածի 4-րդ մաս	4-րդ մասում նախատեսել, որ ՀՎԽ-ն սահմանում է փորձագետ հաշվապահների, աուդիտորների և աուդիտորական	Ընդունվել է: Փոփոխության առաջարկը պայմանավորված է այն	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			կազմակերպությունների ռեեստրում ներառվող տվյալների նվազագույն ցանկը:	հանգամանքով, որ մաս-նագիտացված կառույցները կարող են ռեեստրում ներառել նաև լրացուցիչ տեղեկատվություն՝ ի լրումն ՀՎԽ կողմից սահմանված տեղեկատվության:	
7	ՀՀ կառավարություն	26-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախագծում հստակեցնել, որ մասնագիտացված կառույցի տարեկան գործունեության հաշվետվությունը հաստատվում է մասնագիտացված կառույցի կանոնադրությամբ սահմանված մարմնի կողմից	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
8	ՀՀ կառավարություն	27-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծում հստակեցնել, որ մասնագիտացված կառույցի անդամավճարների չափերը հաստատվում են մասնագիտաց-ված կառույցի կանոնադրությամբ սահմանված մարմնի կողմից	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
9	ՀՀ կառավարություն	35-րդ հոդված	Անցումային դրույթներում հետա-ձգել ՀՎԽ և մասնագիտացված կառույցների ձևավորման համար	Ընդունվել է: Նպատակը ՀՎԽ և մաս-	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			սահմանված ժամկետները	նագիտացված կառույցների ձևավորման առավել խելամիտ ժամկետների սահմանումն է:	
10	ՀՀ կառավարություն	35-րդ հոդված	Անցումային դրույթներում նա-խատեսել նոր մաս ներկայումս ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող, սակայն հաշվապահի կամ աուդիտորի որակավորման վկայական չունեցող անձանց համար առ այն, որ նրանց մինչև 2023 թվականի հունվարի 1-ը կտրամադրվի փորձագետ հաշվապահի որակավորման վկայական, իսկ մինչև այդ վկայականի ժամկետը լրանալը, նրանք իրավունք կու-նենան պարզեցված կարգով ստանալ փորձագետ հաշվապահի որակավորման վկայական	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
11	ՀՀ կառավարություն	36-րդ հոդված	Օրենքը ուժի մեջ մտնելու ամսաթիվ սահմանել 2020 թվականի հունվարի 1-ը	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
12	ՀՀ կառավարություն	2-րդ հոդվածի 1-ին մաս, 6-րդ հոդվածի 1-ին մաս, 2-րդ մաս, 4-րդ մաս և 5-րդ մաս, 7-րդ հոդվածի 3-րդ մաս, 18-րդ հոդվածի 6-րդ մաս, 20-րդ հոդվածի 6-րդ մաս,	Կատարվել են տեխնիկական և խմբագրական բնույթի շտկումներ	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
		22-րդ հոդվածի 6-րդ մաս և 7-րդ մաս, 26-րդ հոդվածի 1-ին մաս և 2-րդ մաս, 33-րդ հոդվածի 2-րդ մաս և 3-րդ մաս, 35-րդ հոդվածի 2-րդ մաս, 3-րդ մաս և 5-րդ մաս			
«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ					
1	ՀՀ կառավարություն	1-ին հոդված	Սահմանել, որ պարտադիր աուդի-տի են ենթակա հաշվետու տարվա	Ընդունվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբեր-յալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			ընթացքում պետական կամ համայնքային միջոցներից տասը միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով ֆինանսավորված ՀԿ-ների ոչ թե ֆինանսական հաշվետ-վությունների ամբողջական փա-թեթը, այլ վերը նշված միջոցների օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները՝ որպես հատուկ նպատակի հաշվետվու-թյուններ	Նախագիծը խմբագրվել է: Գործող նախագծով առկա էր ՀԿ-ների ֆինանսական ծանրաբեռնվածության մեծացման ռիսկ, հետևաբար, առաջարկվել է պարտադիր աուդիտի պահանջ սահմանել միայն հանրային միջոցների օգտագործման վերաբերյալ հաշվետվության, այլ ոչ թե ՀԿ-ների ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթի նկատմամբ, որոնք ներառում են տեղեկատվություն ոչ միայն հանրային, այլ և այլ միջոցների վերաբերյալ	
«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ					
1	ՀՀ կառավարություն	նախագծում	Կատարվել են իրավական տեխնիկայի կանոնների հետ կապված շտկումներ	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է: